ԵԼՀ ֆակուլտետի գիտական խորհրդի՝
29.04.2024 թ. կայացած նիստի թիվ 8 արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ

1. ՈՒԳԸ նախագահի հաշվետվություն։
2. Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ Շ. Պարոնյանի 2023-2024 ուստարում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն։
3. Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ Գ.Սավոյանի 2023-2024 ուստարում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն։
4. Ընթացիկ հարցեր։

Գիտխորհրդի 36 անդամներից նիստին ներկա էին 25-ը։ ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ. Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և անդրադառնալով օրակարգի առաջին հարցին՝ ՈՒԳԸ նախագահի հաշվետվությանը, հրավիրեց Ֆ. Խաչատրյանին ներկայացնելու 2023-2024 ուստարվա կատարած աշխատանքները։

ԼՍԵՑԻՆ՝ ՈՒԳԸ նախագահի՝ Ֆարիդա Խաչատրյանի հաշվետվությունը 2023-2024 ուստարվա կատարած աշխատանքների մասին։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ֆ. Խաչատրյանը նշեց 2023-2024 ուստարում իրականացված, երբեմն էլ չլուսաբանված այն կարևոր նախաձեռնությունները, իրադարձությունները, որոնք նշանակալից են եղել թե՛ ֆակուլտետային ՈՒԳԸ-ի, թե՛ ԵՊՀ ՈՒԳԸ կառույցի համար առհասարակ: Կարևորագույնների շարքում ընդգծվեց ԵՊՀ ՈՒԳԸ միջազգային 9-րդ գիտաժողովին ուսանողների մասնակցությունը, հոդվածների ներկայացումը, ինչպես նաև ՈՒԳԸ անդամների ակտիվ ներգրավվածությունը կազմակերպչական աշխատանքներում:

Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսները հագեցած էին անհատական և թիմային նախաձեռնություններով, մասնավորապես՝ արցախահայ մեր հայրենակիցներին աջակցելու տեսանկյունից։

Ընդհանուր հարցերի հանձնաժողովի պատասխանատու Հայկուհի Ղազարյանը 3 ամիս շարունակ (հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին) ֆրանսերենին վերաբերող դասընթացներ է կազմակերպել արցախահայ 10 և ավել ուսանողների համար:

Միաժամանակ, այդ ամիսներին ֆակուլտետային ՈՒԳԸ անդամները միացան ԵՊՀ ՈՒԳԸ նախաձեռնությանը՝ սահմանամերձ բնակավայրերում բնակություն հաստատած դպրոցահասակներին անհրաժեշտ գրենական պարագաներով, պիտույքներով օժանդակելու գործին:

Ֆակուլտետային ՈՒԳԸ-ն, այս պահին կազմի համալրման փուլում լինելով հանդերձ, ընդգրկվել է նաև «Հոդվածագրության դպրոց» ծրագրում՝ նպատակ ունենալով բարելավել մասնակից ուսանողների գիտահետազոտական հմտությունները, ինչպես նաև կազմակերպչական ներգրավվածություն ունենալ առաջին անգամ իրականացվող ծրագրի շրջանակներում:

Առաջիկա շաբաթվա ընթացքում նախատեսվում է ֆակուլտետային նոր նախագահի ընտրության կազմակերպում: Որպես թեկնածու առաջադրվել է ԵԼՀ ֆակուլտետի ՈՒԳԸ անդամ,

համատեղությամբ ընդհանուր հարցերի հանձնաժողովի պատասխանատու և 2022-2023 ուստարում ԵՊՀ ՈՒԳԸ «Լավագույն անդամ» ճանաչված Հայկուհի Ղազարյանը:

Ֆ. Խաչատրյանը հույս հայտնեց, որ նորընտիր նախագահի ընտրությունը կարևորագույն կադրային փոփոխություն կլինի առաջիկա գործունեության ծավալման և շարունակական բազմաբովանդակ ծրագրերի իրականացման տեսանկյունից՝ պահպանելով մշտապես կիրարկված ռազմավարական մոտեցումներն ու տեսլականը: Նիստի ընթացքում արված թե՛ դրական, և թե՛ բացասական բոլոր դիտարկումներն ի գիտություն կընդունվեն և միանշանակ կնպաստեն էլ ավելի արդյունավետ և հագեցած գործունեության իրականացմանը:

Հաշվետու ելույթն ամփոփվեց ֆակուլտետի դեկան Գ. Բարսեղյանի կողմից ֆակուլտետային ՈՒԳԸ գործունեության ըստ արժանվույն գնահատանքով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ֆ. Խաչատրյանի հաշվետվությունը գնահատել դրական:

- Գ. Բարսեղյանը անցավ օրակարգի երկրորդ հարցին՝ միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ Շ. Պարոնյանի 2023-2024 ուստարում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությանը:

ԼՍԵՑԻՆ՝ Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Շ. Պարոնյանի 2023-2024 ուստարում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Շ. Պարոնյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնում, ինչպես միշտ, մեծ աշխատանք է տարվել ուսումնական գործընթացն էլ ավելի բարելավելու, դասախոսների գիտահետազոտական և մանկավարժական գործունեությունը խթանելու և կատարելագործելու, ուսանողների ուսումնական փորձառությունը ուղղորդելու ու նրանց գիտահետազոտական աշխատանքները ղեկավարելու ուղղություններով:

Ամբիոնի գերակա խնդիրներից մեկը մշտապես եղել է ուսուցման որակի բարելավումը և ուսանողների գիտելիքների ու հմտությունների համապատասխանեցումը միջազգային կրթական չափորոշիչներին: Ուստի տարիներ շարունակ ամբիոնի դասախոսների համար առաջնահերթ խնդիր է եղել օտար լեզուների ուսուցման ժամանակակից մեթոդների իմացությունը, տարբեր առցանց հարթակների կիրառումը լսարանում և արտալսարանային աշխատանքների համար: Օտար լեզվի տիրապետման տարբեր հմտությունները և կարողությունները կարևորելով՝ բակալավրիատի կրթական ծրագիրը այնպես է կազմված, որ դասավանդման տարբեր փուլերում հենքային են համարվում 1 կամ 2 հմտություններ /գրավոր խոսք, վերարտադրություն, լսողական հմտություն, բանավոր խոսք/՝ չանտեսելով մյուս հմտությունների զարգացման կարևորությունը: Շ. Պարոնյանը նշեց, որ կարևոր է համարում 3-րդ կուրսի ընթացիկ քննությունների թեստերում և ավարտական քննության մեջ ներառված լսողական հմտությունների և հանպատրաստից բանավոր խոսքի ներառումը, որով օբյեկտիվ կերպով ստուգվում են ուսանողների լսողական և բանավոր խոսքի հմտությունները: Քանի որ վերջին տարիներին ուսանողները ընդունվում են առանց բանավոր քննություն հանձնելու, վերանայվել է 1-ին կուրսում դասավանդման մարտավարությունը՝ ներառելով բանավոր և գրավոր խոսքի վերարտադրության հմտությունների զարգացման հատուկ դասընթացներ:

Փոխվել է նաև ուսանողների քերականական գիտելիքները զարգացնելու մարտավարությունը՝ ներառելով նաև անգլերենի քերականական համակարգին վերաբերող տարրական գիտելիքներ: Այս ձևով 4-րդ կուրսում արդեն ուսանողները հավասարապես տիրապետում են բոլոր հմտություններին և հարստացնում են իրենց լեզվական փորձառությունը: Ուսուցումը հստակորեն համապատասխանում է օտար լեզվի գիտելիքների վերաբերյալ միջազգային որակավորման քննությունների պահանջներին, իսկ մեր ուսանողները բավարար գիտելիքներ են ստանում որակավորման այդ քննությունները հաջողությամբ հանձնելու համար: Նախորդ տարի ԵՊՀ կրթական ծրագրերում ներդրված ձևավորող գնահատման (formative assessment) համակարգը նոր մարտահրավերներ առաջացրեց դասախոսների և ուսանողների համար: Համակարգը հնարավորություն է տալիս ուսանողների գիտելիքները փուլ առ փուլ և առավել օբյեկտիվ և բազմակողմանի գնահատել: Այնուհետև, այդ համակարգը նաև գիտելիքների ստուգման կրեատիվ և ուսանողակենտրոն լուծումներ գտնելու հնարավորություն է տալիս: PBL-ը, որը որպես մասնագիտական անգլերեն դասընթացի ընթացիկ ստուգման ձև կիրառվում է բակալավրիատի 1-ին և 2-րդ կուրսերում, նախատեսում է խմբային աշխատանք, որն ուսանողները մեծ ոգևորությամբ են կատարում: Նման ձևով կրեատիվ աշխատանք է կատարվում տնային ընթերցանության ընթացիկ ստուգումը այսպես կոչված flipbook-ի ձևով իրականացնելու մեթոդի օգնությամբ, երբ ուսանողները կարդում և ձևավորում են իրենց նախընտրած գիրքը: Ամբիոնը յուրաքանչյուր առարկայի դասավանդման համար ստեղծում է պորտֆոլիո՝ ներառելով առարկայական ծրագիրը, օրացուցային պլանը, ստուգման ձևերը, թեստերը ամեն տարի թարմացնելու նպատակով: Իհարկե, ընթացքում փորձարկումներ են արվում՝ գիտելիքի մատուցման և ստուգման լավագույն տարբերակները գտնելու համար, մշակվում են ուսուցման առավել արդյունավետ մեթոդներ և գիտելիքների ստուգման ճշգրիտ մեթոդաբանություն՝ միջազգային ստանդարտներին համապատասխան: Կան նաև դժգոհություններ երկու կողմից՝ ստուգման պարբերականության հետ կապված, որ հիմնականում հոգեբանական խնդիր է՝ հարմարվելու գիտելիքի ստուգման նոր համակարգին. այն ժամանակ է պահանջում: Նշվեց նաև, որ գիտելիքների ստուգման և գնահատման համար շատ կարևոր է միջազգային ստանդարտներին համապատասխանող սանդղակների մշակումն ու կիրառումը: Ամբիոնը հետևողականորեն մշակում է այդ սանդղակները և կիրառում քննությունների ժամանակ: Ուսանողները, որոնց համար հատկապես կարևոր է միջմշակութային հաղորդակցության փորձառությունը, ուսումնառության ընթացքում բազմաթիվ հնարավորություններ են ստանում կիրառելու մշակութային իրազեկության գիտելիքները, հմտությունները: Նախ, 2014 թվականից ի վեր ամեն տարի ամբիոնում գրավոր և բանավոր խոսքի հմտություններ են դասավանդում ԱՄՆ Կառավարության English Language Fellow կամ Fulbright կրթական ծրագրերով Հայաստան ժամանած մասնագետներ: Շփվելով լեզվակիր դասախոսների հետ՝ ուսանողները ծանոթանում են ամերիկյան կրթօջախներին հատուկ առաջադրանքների ձևաչափին և գնահատման համակարգին, ինչպես նաև լեզվամշակույթի և մշակութային արժեքների համակարգի մասին գիտելիքներ են ձեռք բերում: Համավարակի ժամանակաշրջանում ամբիոնը առցանց հարթակով սկսեց համագործակցել Peace Corps Armenia ծրագրով Հայաստանում դասավանդող մասնագետների հետ: Նրանց մասնակցությամբ «Միջմշակութային հաղորդակցության հմտությունների զարգացում» առարկայի դասավանդումը 2 կուրսում հրաշալի նախաձեռնություն էր, որը ձեռնարկեցինք 4 տարի առաջ: Այս ուսումնական տարում, Խաղաղության կորպուսը ԵՊՀ-ին աննախադեպ հնարավորություն տվեց. առդեմ դասավանդող ամերիկացի կամավոր դասախոս, որը շատ

փորձառու գործարար հաղորդակցման խորհրդատու է: Դեյվիդ Թըրնըրի օգնությամբ թարմացվել և լրամշակվել են «Միջմշակութային հաղորդակցության հմտությունների զարգացում» առարկան, ինչպես նաև բակալավրիատում և մագիստրատուրայում դասավանդվող մարքեթինգային հաղորդակցությանը և գործարար հաղորդակցությանը առնչվող առարկաները: Ամբիոնը թերևս հայաստանյան բուհերից միակն է, որ լեզվաբանական կրթության հետ համատեղ իրականացնում է մարքեթինգային հաղորդակցության հմտությունների ուսուցում, ուստի այդ կրթական ծրագրի ուսանողները ստանում են ներկայումս շատ պահանջված մասնագիտություններով աշխատելու հնարավորություն: Այդ առումով «Միջազգային գործարար հաղորդակցման լեզվամշակույթ» մագիստրոսական ծրագիրը թերևս հայաստանյան կրթական համակարգի ամենահաջողված ծրագրերից է:

Միջմշակութային հաղորդակցության և միջազգային համագործակցության մի նոր շունչ է Եվրոպայում և Ամերիկայում լայն տարածում գտած COIL ծրագրին մեր ուսանողների ներգրավումը: Հաշվետու ժամանակաշրջանում այդ ծրագրի շրջանակներում կազմակերպել ենք 4-րդ կուրսի ուսանողների մասնագիտական պրակտիկան Բրազիլիայի Ֆատեք համալսարանի և Ֆրանսիայի Կլերմոն Ֆերան քաղաքի համալսարանի հետ: Պրակտիկայի շրջանակներում ուսանողները ֆրանսիացի և ամբիոնի դասախոսների խորհրդատվությամբ անգլերեն են դասավանդել ֆրանսիացի ուսանողներին, բրազիլացի և ամբիոնի դասախոսների խորհրդատվությամբ ուսանողները խմբերով մասնակցել են մշակութային թեմայով նախագծի ստեղծմանը: Երկու դեպքում էլ ուսանողների համար միջմշակութային հաղորդակցության մեծ կենսափորձ է եղել: Սեպտեմբերին ամբիոնի դոցենտ Անուշ Այունցը ԵՊՀ դրամաշնորհի շրջանակներում մեկնել էր Բրազիլիայի Սան Պաուլո քաղաք՝ մասնակցելու գործընկեր Ֆատեք համալսարանի կազմակերպած միջազգային գիտաժողովին, որը նվիրված էր COIL ծրագրի հարցերին: Սկսվել է նաև գործընթաց Ֆատեք համալսարանի և ԵՊՀ-ի միջև համագործակցության հուշագիր ստորագրելու, ինչը էլ ավելի կհեշտացնի համագործակցությունը: Գալիք տարիներին նպատակ ունենք ընդլայնելու COIL ծրագրի շրջանակը՝ համագործակցելով եվրոպական և ամերիկյան համալսարանների հետ, քանի որ դա միջազգայնացման մեծ հեռանկարներ է բացում առցանց եղանակով՝ առանց լրացուցիչ ծախսերի: Ամբիոնը մեծ կարևորություն է տալիս մասնագիտական պրակտիկային, ուստի մասնագիտական պրակտիկայի շրջանակներում ուսանողները նաև հետաքրքիր նախագծեր են անցկացնում Հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ խորացնելով հայ ազգային ինքնության մասին իրենց գիտելիքները: Այս տարի միջմշակութային հաղորդակցության հմտությունների զարգացման մեկ այլ հնարավորություն էլ ստեղծվեց Հայ Բարեգործական Հիմնադրամի առցանց քոլեջի հետ, որը հավանաբար կշարունակվի: ՏՏ հայաստանյան ընկերությունների հետ համագործակցելով՝ զարգացնում ենք մարքեթինգային հաղորդակցության հմտությունները: Ամբիոնում դասավանդող ամերիկացի մասնագետները նաև սեմինարներ են անցկացնում դասախոսների համար, նրանց տեղեկացնում անգլերենի դասավանդման ժամանակակից մեթոդների, լսարանում դրանց կիրառման մեթոդաբանության մասին: Ինչպես անցյալ տարի, այս տարի նույնպես, ամբիոնի նախաձեռնությամբ և ԱՄՆ դեսպանատան կրթական ծրագրերի բաժնի աջակցությամբ մեր ամբիոնում դասավանդող ամերիկացի մեր գործընկեր Կիրի Մանուկինը ամերիկացի մի շարք գործընկերների հետ Yerevan TESOL-2 խորագրով ութ թեմատիկ սեմինարների շարք անցկացրեց ԵՊՀ և Երևանի մյուս բուհերի դասախոսների համար. արձագանքները դրական էին: Հատկապես կարևոր է այս սեմինարների ընթացքում հուզական իրազեկմանը վերաբերող քննարկումները, որոնք միտված են լսարանում

բարենպաստ մթնոլորտ ստեղծելու, ուսանող-դասախոս փոխհարաբերությունները ճիշտ կառավարելու հմտությունների զարգացմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում Peace Corps Armenia-ի հետ իրականացվել է նախաձեռնություն. դեկտեմբերի 11-12-ը կազմակերպվել է կոնֆերանս «Intercultural Communication Skills in English Language Teaching» թեմայով, որին մասնակցել են անգլերենի մոտ 100 ուսուցիչներ Հայաստանի տարբեր մարզերից: Նրանք հարստացրել են անգլերենը որպես միջմշակութային հաղորդակցության գործիք կիրառելու և դասավանդելու իրենց գիտելիքները և հմտությունները:

Հոկտեմբերի 26-28-ը ամբիոնի դասախոսները, բակալավրիատի և մագիստրատուրայի շուրջ 10 ուսանողներ մասնակցել են Նորվեգիայի Օսլոմետ համալսարանի կողմից կազմակերպված «The Role of Sign Language and Spoken Language Interpreting in Public Sector in Russia and Norway» (2018–2023) միջազգային աշխատաժողովին:

Մայիսի 24-25-ը MultiLingNet եվրոպական ասոցիացիայի հետ համատեղ անցկացվելու է միջազգային գիտաժողով՝ «International Conference on Multilingual and Multicultural Learning: Policies and Practices 3 (MMLPP 3)» խորագրով: MultiLingNet-ը հեղինակավոր միջազգային կազմակերպություն է, որը միավորում է բազմամշակութայնության և օտար լեզվի դասավանդման հիմնահարցերով զբաղվող լեզվաբանների: Գիտաժողովի շրջանակներում նախատեսվում են եվրոպական ակադեմիական շրջանակներում մեծ հեղինակություն վայելող հիմնական բանախոսների զեկուցումներ (Zhu Hua, University College London, Elizabeth Lanza, University of Oslo, Li Wei, University College London): Գիտաժողովի 40 մասնակիցներից 30-ը արտասահմանյան գործընկերներն են, մասակիցների աշխարհագրությունը աննախադեպ լայն է՝ ԱՄՆ, Կանադա, Ճապոնիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա, Պորտուգալիա, Ֆինլանդիա, Հունաստան, Իտալիա, Ղազախստան, Ռուսաստան: Կմասնակցեն նաև միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի և անգլիական բանասիրության ամբիոնի դասախոսներից:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի դասախոսները մասնակցել են առդեմ և առցանց անցկացվող մի շարք վերապատրաստումների, միջազգային գիտաժողովների և վեբինարների: Դրանցից հատկանշական է Yerevan TESOL-2 սեմինարների շարքը, «Multilingual and Multicultural Learning: Policies and Practices 3»,«Intercultural Communication Skills in English Language Teaching», «Translation through Intermediary Language» գիտաժողովները: ԱՄՆ Խաղաղության կորպուսի հետ հաջող համագործակցելու արդյունքում ամբիոնի դասախոս Նվարդ Տեր-Մինասյանը հնարավորություն ունեցավ 3 շաբաթով մեկնելու ԱՄՆ՝ մասնակցելով անգլերենի ուսուցիչների վերապատրաստման ծրագրին և TESOL-2024 հեղինակավոր ամենամյա միջազգային գիտաժողովին Ֆլորիդայում, ինչպես նաև «American Language and Multicultural Diversity» միջազգային այցելուների առաջնորդության ծրագրին Վաշինգտոնում:

Ամբիոնը մշտապես համագործակցել է նաև SS ոլորտի կազմակերպությունների և գովազդային տեղեկատվության ոլորտի մասնագետների հետ (Microsoft Armenia, Digitain), որոնք առցանց կամ առդեմ սեմինարներ, աշխատաժողովներ են կազմակերպում ուսանողների համար:

Անդրադառնալով ամբիոնում կատարվող գիտահետազոտական աշխատանքներին՝ նշվեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի դասախոսների կողմից տպագրվել է 19 հոդված հայաստանյան և արտասահմանյան գիտական պարբերականներում/այդ թվում 5-ը հանձնված են տպագրության, 2 ուսումնական ձեռնարկ:

Դասախոսները մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել միջազգային և տեղական գիտաժողովներում (10 մասնակցություն, 12 զեկուցում), աշխատաժողովների և սեմինարների՝ առցանց (թվով 6) և առդեմ (թվով 13):

Ս/թ ապրիլին ամբիոնի դոցենտ Մարինե Յաղուբյանը մեկշաբաթյա գործուղման է մեկնել Գերմանիայի Գրայֆսվալդի համալսարան՝ գիտահետազոտական աշխատանք իրականացնելու նպատակով: Ամբիոնի կրթական ծրագրերում դասավանդել են նաև «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունության գործողության շրջանակներում հրավիրյալ դասախոսներ: Նշվեց նաև, որ ամբիոնի դոցենտ Սիրարփի Կարապետյանը ապրիլի 28-ից մայիսի 4-ը նույն ծրագրով մեկնել է Բուլղարիա՝ որպես հրավիրյալ դասախոս դասավանդելու Բլագոյեվգրադի «Նեոֆիտ Ռիլսկի» հարավարևմտյան համալսարանում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Դրական համարել հաշվետվությունը: Որոշումն ընդունվեց միաձայն:

- Գ. Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի երրորդ հարցին՝ գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ Գ.Սավոյանի 2023-2024 ուստարում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությանը:

ԼՍԵՑԻՆ՝ Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ Գ. Սավոյանի 2023-2024 ուստարում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Գ.Սավոյանը նշեց, որ գերմանական բանասիրության ամբիոնը ծավալել է ամբիոնի և համալսարանի միջազգայնացմանն ուղղված գործունեություն.

1. **Դասախոսների վերապատրաստումներ.**

1.1. Գերմանիայի Լյուդվիգսհաֆենի համալսարանի հրավիրյալ պրոֆեսոր Վոլֆգանգ Քրիգերն Էրազմուս+ ծրագրի շրջանակներում ութժամյա վերապատրաստումներ է անցկացրել «Ինքնակազմակերպված ուսուցում» թեմայով՝ քննարկելով այն մեթոդները, որոնք ուղղված են դասի ընթացքում ավելի գիտակցված ու ինքնուրույն ձևով գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելուն /սեպտեմբեր, 2023/:

1.2. Իտալիայի Վերոնայի համալսարանի դոկտոր Պյերջովաննա Գրոսին Էրազմուս+ ծրագրի շրջանակում անցկացրել է ութժամյա վերապատրաստում-սեմինար դասախոսական կազմի և ուսանողների համար ««Վիքիպեդիա» ազատ հանրագիտարանի հոդվածների ստեղծումը և դրանց թարգմանությունները» թեմայով՝ ծանոթացնելով համայնքին, կանոններին, կառուցվածքին, անհատական էջի ստեղծմանը և թարգմանություններին ու գործիքներին: Կարևորագույն նպատակներից է հետագայում ակտիվորեն ներգրավել դասախոսներին ու ուսանողներին հոդվածների ստեղծման, թարգմանության, խմբագրման գործում՝ նպաստելով հայկական Վիքիպեդիայի հոդվածների համալրմանը, ակտիվացմանն ու ընդլայնմամը: Ներդնելով այս փորձը գերմաներենի գործնական դասընթացներում՝ ամբիոնը նպատակ ունի զարգանել ուսանողների բազմակողմանի գիտելիքներն ու լեզվական հմտությունները, թվային գրագիտությունը, հետազոտական հմտություններն ու քննադատական մտածողությունը /դեկտեմբեր, 2023/:

1.3. Համագործակցելով Իտալիայի Լ՛Աքվիլա համալսարանի հետ՝ ամբիոնը կազմակերպել է դասախոսություն դասախոսների և ուսանողների համար պրոֆեսոր Բ. Ֆոգտի հետ «Կոնֆլիկտը և վեճը միջմշակութային հարաբերությունների տեսանկյունից» թեմայով /հունվար, 2024/:

1.4. ԴԱԱԴ լեկտոր Դանիել Լեպետիտը դասախոսություն է կարդացել «Հաղորդակցական քերականության դասավանդման զարգացումը» թեմայով /հունվար, 2024/:

1.5. Գերմանական բանասիրության ամբիոնը Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության դասախոսներ Դանիել Լեպետիտի և Աննեգրետ Բայերի հետ համատեղ ամբիոնի դասախոսների համար կազմակերպել է ութժամյա վերապատրաստման դասընթացներ հետևյալ թեմաներով. «Ամբողջը թատրոնի շուրջ. ինչպես դասի ընթացքում կազմել թատերական տեքստեր», «Ամբողջը թատրոնի շուրջ. ինչպես դասի ընթացքում կազմել թատերական վարժություններ», «Գերմաներենի բառաքերականական մեթոդները դասավանդման ընթացքում» /փետրվար – մայիս, 2024/:

1.6. Քոբլենց-Լանդաու համալսարանի և ամբիոնի միջև համագործակցության շրջանակներում հրավիրյալ պրոֆեսորներ Միխայիլ Քլեմը և Ֆլորիան Վեբերը «Մշակույթի և լանդշաֆտի թվայնացում» համատեղ նախագծի շրջանակներում կանցկացնեն դասախոսների և ուսանողների վերապատրաստում /մայիս, 2024, 8 ժամ/:

2. Ուսանողների համար նախատեսված վերապատրաստում-դասընթացներ.

2.1. Լյուդվիգսհաֆենի համալսարանի պրոֆեսոր Ռ. Քրիգերը շաբաթական 8 ժամ /սեպտեմբեր 2023/ ծանրաբեռնվածությամբ անցկացրել է դասընթացներ բոլոր կուրսերի ուսանողների համար հետևյալ թեմաներով.

1. Դարձվածաբանություն,
2. Գերմաներենի «դասական» սխալները,
3. Բայի խնդրառությունը,
4. Զրույցը առօրյայում,
5. Փոխանունությունները գերմաներենում:

2.2. Ամբիոնը Թիֆլիսի Գյոթեի անվան ինստիտուտի հետ համատեղ 2023 թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում 2-րդ անգամ իրականացրել է ծրագիր, որի նպատակն էր գերմաներեն սովորող ուսանողներին ներկայացնել գերմաներենի դասավանդման ժամանակակից մեթոդներ: Այս դասընթացի նպատակն էր խթանել լեզվի նկատմամբ հետաքրքրությունը, սովորողներին փոխանցել հմտություններ և գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են դասավանդման տարբեր մակարդակներում:

Այս ծրագրի շրջանակներում կարևոր էր նաև Գյոթեի անվան ինստիտուտի տարածաշրջանային պատասխանատու Սյուզանն Ռադվանի գլխավորած պատվիրակության այցը ԵՊՀ: Ռադվանին հյուրընկալեց նաև ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը: Հանդիպման ժամանակ ռեկտորը ներկայացրեց ԵՊՀ միջազգայնացման շրջանակում իրականացվող ծրագրերը՝ քննարկելով նաև համագործակցության ընդլայնման հնարավորությունները:

2.3. 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակում ԴԱԱԴ դասախոս Դանիել Լեպետիտը անվճար հիմունքներով անցկացրել է դասախոսություններ ԵՊՀ բոլոր ֆակուլտետների ուսանողների համար, որոնք ցանկություն են հայտնել սովորել և զարգացնել գերմաներենի հմտությունները /20 ուսանող/:

2.4. ԴԱԱԴ դասախոս Դանիել Լեպետիտը 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակում անցկացրել է հեռահամագործակցային նախագիծ /Telekollaboration/ Ճապոնիայի Կոբա քաղաքի Օտար լեզուների, Իսպանիայի Ժիրոնայի, Սինգապուրի Ազգային համալսարանների հետ: Դասերի ընթացքում «Անգլերեն լեզու, գերմաներեն լեզու և

հաղորդակցություն» բաժնի 2-րդ կուրսի ուսանողների հետ քննարկվել են միջմշակութային հաղորդակցության թեմաներ, պատրաստվել են տեսահոլովակներ և անցկացվել քննարկումներ:

Հետաքրքիր միջոցառումներից էր նաև «Աշխատանքի և ուսուցման հնարավորությունները Գերմանիայում» խորագրով հանդիպումը Գերմանական առողջապահության կազմակերպության խորհրդատու Ինգո Կուսերովի, «Diakonia» գերմանական բարեգործական կազմակերպության ներկայացուցիչ Արմինե Հովհաննիսյանի և DAAD լեկտոր Դանիել Լեպետիտի հետ, որի ընթացքում ներկայացվել են Գերմանիայում ուսումը շարունակելու կամ աշխատելու հնարավորությունները: Այս միջոցառումը կարևոր է Հայաստանում գերմաներենի խթանման ու տարածման առումով:

Ամբիոնի ջանքերով Էրազմուս+ ծրագրով արտերկիր սովորելու են մեկնել «Անգլերեն լեզու, գերմաներեն լեզու և հաղորդակցություն» կրթական ծրագրի 9 ուսանող:

Ամբիոնի վարիչ Գ. Սավոյանը այցելել է Լ՛Աքվիլայի, Գրայֆսվալդի և Վերոնայի համալսարաններ՝ կարդալով դասախոսություններ դասախոսների և մագիստրոսների համար: Այցերի ժամանակ ստեղծվել են համագործակցության նոր կապեր, քննարկվել տարբեր նախագծեր, այդ թվում՝ միջազգային գիտաժողովների կազմակերպում:

Գիտամանկավարժական գործունեություն.

1. 2023 թվականի դեկտեմբերին գերմանական բանասիրության ամբիոնի դասախոսներ Մերի Նավասարդյանը և Քրիստինա Սողոմոնյանը, ովքեր նաև Վրաստանի Գյոթե ինստիտուտի վերապատրաստողներ են, անցկացրել են գերմաներենի ուսուցիչների վերապատրաստում «Խաղեր դասաժամին» թեմայով:
2. Ամբիոնի կարևոր ձեռքբերումներից է գերմանական հայտնի Քլեթ հրատարակչության, Հայաստանի Մասնակցային դպրոցի, Երևանի Լեզվի ուսուցման կենտրոնի հետ համագործակցությունը, որի շրջանակներում ամբիոնը մշակել է հանրակրթական դպրոցների համար նախատեսված 3-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ դասարանների դասագրքեր՝ նոր մեթոդաբանությամբ: Դասագրքերը համապատասխանում են չափորոշիչներին: Ի տարբերություն մյուս դասագրքերի՝ այս դասագրքերն ունեն նաև լսողական վարժություններ և զարգացնում են լեզվական լսողական հմտությունները: Այս դասագրքերը գտնվում են այժմ փորձաքննության փուլում: Փորձաքննություն անցնելուց հետո դասագրքերը կթույլատրվեն նախարարության կողմից որպես հանրակրթական դպրոցների դասագրքեր: Համահեղինակները՝ Գ. Սավոյանը, Ռ. Քոսայանը և Ե. Գևորգյանը վերապատրաստումներ կանցկացնեն հանրակրթական դպրոցի ուսուցիչների համար:

Կապեր հանրակրթական դպրոցների հետ

Հաստատելով և խորացնելով ամբիոնի կապերը դպրոցների հետ՝ ամբիոնը կազմակերպել է դպրոցական օլիմպիադա՝ գերմաներեն էսսեների մրցույթ՝ «Գերմաներեն. լեզու, որը բացում է ապագայի դռները» («Deutsch — eine Sprache, die die Tür zur Zukunft öffnet») վերտառությամբ: Մասնակցել են 10-12-րդ դասարանների 26 աշակերտ ՀՀ տարբեր մարզերի դպրոցներից: 3 էսսեներ արժանացել են գլխավոր մրցանակների, իսկ 11 աշակերտ՝ խրախուսական մրցանակների:

Ամբիոնի դասախոսները մասնակցել են 4 միջազգային և 3 հանրապետական գիտաժողովների: Հրատարակության է պատրաստվում 5 գիտական հոդված:

Ընթացիկ հարցեր.

Միաձայն քվեարկության արդյունքում որոշեցին.

- Երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Տաթևիկ Ալբերտի Կիրակոսյանի՝ «Հուզարտահայտչականությունը համացանցային հաղորդակցության մեջ» մենագրությունը տպագրության:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և

գիտխորհրդի նախագահ, բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Դալալյան

29.04.2024 թ.